

Հայկական հարց. Հայերի ցեղասպանությունը: Ռուսերեն լեզվով գրականության մատենագիտություն (1877 - 1997):

Կազմողներ՝ Պ.Հ.Հովհաննիսյան, Է.Հ.Բաբայան, Ազգային Հարցի և ցեղասպանության ուսումնասիրման կենտրոն, «Խոսք» հրատ., Ե., 1998, 316 էջ:

Վերջին շրջանում մեծացել է հետաքրքրությունը Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության նկատմամբ: Այս առումով ողջունելի է Ազգային Հարցի և ցեղասպանության ուսումնասիրման կենտրոնի հրատարակած «Հայկական Հարց. Հայերի ցեղասպանությունը» խորագրով ռուսերեն լեզվով հրատարակությունների մատենագիտությունը, որն ընդգրկում է 1877 - 1997թթ. ընկած ժամանակաշրջանը: Այն երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ Պ.Հովհաննիսյանի և գիտաշխատող Է.Բաբայանի տքնաջան աշխատանքի արդյունքն է:

Աներկրա է Հայկական Հարցի և ցեղասպանության մատենագիտության թե՛ այժմեական և թե՛ գիտական մեծ կարևորությունը մեր օրերում, երբ Հայերի ցեղասպանությունը սկսել են ճանաչել նորանոր երկրներ: Հնագույն և Հարուստ քաղաքակրթության կրող մեր ժողովրդի նկատմամբ իրականացված ոճրագործության դատապարտումը հրատապ է մեր օրերում, երբ ամբողջ քաղաքակրթ մարդկությանը հուզող առաջնահերթ Հարցերից է ինչպես առանձին մարդ անհատի, այնպես էլ ամբողջ ժողովուրդների բնական ու պատմական իրավունքների պաշտպանությունը: Ցավոք, այսօր էլ Հայկական Հարցի և Մեծ եղեռնի նկատմամբ դիրքորոշումները հաճախ պայմանավորված են քաղաքական շահագրգռություններով: Ինդուս նշանակալից են տարբեր պետություններում դրանք պետական շահերին զոհաբերելը կամ էլ անտեսելը: Ուստի, մեր՝ Հայ ուսումնասիրողների խնդիրն է ցույց տալ, որ Հայերի ցեղասպանությունը սոսկ Հայ ժողովրդին վերաբերող Հարց չէ, այլ համամարդկային ողբերգություն:

Նկատի ունենալով, որ Հայերը ցեղասպանությունն ապրած ժողովուրդ են, որ ոտնահարված են նրանց դարավոր իրավունքները, անհրաժեշտություն է դառնում փաստաթղթերի և ուսումնասիրությունների ի մի բերումը և դրանց մատենագրության ստեղծումն ու հրատարակումը, որը թե՛ պատմագիտական և թե՛ քաղաքական կարևոր նշանակություն ունի: Այս առումով ևս աշխատության լույս ընծայումը տեղին էր ու ժամանակին:

Մատենագիտությունն ունի լայն ու համակողմանի ընդգրկում: Պատահական չէ, որ աշխատության հեղինակներից Պ.Հովհաննիսյանը առաջաբանում հանգամանորեն քննարկում, վերլուծում և բնութագրում է կատարված աշխատանքը, հիմնավորում դրա այժմեականությունն ու գիտականությունը՝ հատկապես մեր ժամանակների համար: «Հայոց ցեղասպանության և Հայկական Հարցի վերաբերյալ գոյություն ունի բավական հարուստ գրականություն, - ընդգծվում է աշխատության առաջաբանում, - դրանց վերաբերյալ ուսումնասիրություններն անհամեմատ ավելի շատ են Հայոց պատմության մյուս հիմնահարցերի համեմատ: Այս հարցերը գիտնականների ուշադրության կենտրոնում են եղել Հայրուր տարուց ավելի, որի ընթացքում 1877 - 1997թթ., հրատարակվել են պաշտոնական ու արիստային հավաստի փաստաթղթերի ժողովածուներ, ականատեսների ու կոտորածների փրկվածների հուշեր, վկայություններ, ինչպես նաև գիտական ուսումնասիրություններ և այլ բնույթի շատ աշխատություններ, որոնցում

րացաՀայտված են այն ծանրագույն Հոնցագործությունները Հայ ժողովրդի նկատմամբ, որ իրագործեց ռազմատենչ, պանթուրքիստ ջարդարարների պետությունը 1890-կան թթ. և Հատկապես Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին: Հարկ է արձանագրել, որ միայն մենագրությունների թիվը այս ՀիմնաՀարցերի վերաբերյալ անցնում է Հինգ Հարյուրից: Մասնավորապես մեծ են Հայ պատմագիտության ու Հրապարակախոսության ձեռքբերումները: Անցյալ դարի 70-ական թթ. մինչև այժմ Հայ պատմաբանները Հրատարակել են մեծ թվով մենագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, Հուշագրություններ և այլն:

Այս Հարցերին անդրադարձել են ինչպես Հայ, այնպես էլ օտարազգի բազմաթիվ պատմաբաններ ու Հրապարակախոսներ՝ տարբեր երկրներում, տարբեր լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն և այլն» (էջ 5): Բավական է նշել, որ միայն Փրանսիայում 1900 - 1960թթ. լույս է տեսել մոտ 400 զիրք՝ նվիրված Հայկական Հարցին և ցեղասպանությանը:

Պ.Հովհաննիսյանը Համոզիչ Հիմնավորում է, որ նշված Հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ Հրատարակությունների մեջ պատշաճ տեղ ունեն ռուսերեն ուսումնասիրությունները: Դա բացատրվում է նրանով, որ ռուսական պատմական, Հասարակական-քաղաքական միտքը և Հրապարակախոսությունն առաջիններից էին, որ անդրադարձան Հայկական Հարցին ու ցեղասպանությանը: Լիովին Համաձայն ենք Հեղինակի այն մտքին, որ XIXդ. 70-կան թթ. մինչև 1917թ. չկա ռուսական կայսրությունում Հրատարակված ոչ մի ամսագիր կամ թերթ, որտեղ քննարկված չլիի թուրքական իշխանությունների պանիսլամական, պանթուրքական Հանցավոր քաղաքականությունը Հայ ժողովրդի նկատմամբ: Աշխատության մեջ բերված են «Մոսկվայի ձայն», «Պատմական լրագրեր», «Տարեգրություն», «Կովկասյան խոսք», «Հայաստանի լրագրեր» (Մոսկվա, 1916 - 1918), «Կարս» (1883 - 1916) և այլ թերթերում ու ամսագրերում, ինչպես նաև Հայաստանի ուսալեզու մամուլում տպագրված մեծ թիվ կազմող Հոդվածները: Աշխատության առաջաբանում միանգամայն արդարացի քննադատվում են խորհրդային ժամանակներում լույս տեսած առանձին աշխատություններ, ինչպիսին է. օրինակ, Մ.Անդրյուխինի՝ 1967թ. Մոսկվայում լույս տեսած, ցեղասպանության ՀիմնաՀարցին նվիրված աշխատությունը, որտեղ Հայերի ցեղասպանության մասին խոսք չկա: 1980-ական թթ. կեսերից սկսած փոխվում է Հայոց ցեղասպանության նկատմամբ վերաբերմունքը, և բազմաթիվ լուրջ գիտական ուսումնասիրություններ են երևան գալիս՝ նվիրված Հայերի ցեղասպանության Հարցին: Պատահական չէ, որ Ռուսաստանի պետական Դուման ոչ միայն ճանաչեց 1915 - 1922թթ. Հայերի ցեղասպանությունը, այլև ապրիլի 24-ը Հայտարարեց սգո օր:

Մատենագիտությանը ի մոտո ծանոթանալիս ակնհայտորեն երևում է, որ Հեղինակներն իրենց առջև խնդիր են դրել խթանել ՀիմնաՀարցի Հետազա խոր ուսումնասիրությունը: Բնութագրելով նախորդ ժամանակներում Հայկական Հարցի ու Հայերի ցեղասպանության վերաբերյալ Հրատարակված Հայկական մատենագիտությունները, Պ.Հովհաննիսյանը նշում է դրանց թե՛ դրական, թե՛ թերի կողմերը: Նա ամենաՀաջողված գործերից է Համարում, մասնավորապես, Ռ.Հովհաննիսյանի Հեղինակությամբ Հրատարակված 1915 - 1923թթ. մատենագիտությունը: Այդ աշխատության երկրորդ բաժնում թվարկված են 460 անուն մենագրություններ և փաստաթղթեր՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն լեզուներով: Արժեքավոր են նաև Հ.Անասյանի ռուսերեն և անգլերեն լեզուներով Հրատարակված

«Համառոտ մատենագիտությունը» և Ա.Կիրակոսյանի՝ Հայկական Հարցին վերաբերող 1890 - 1900թթ. ընդգրկող մատենագիտությունը՝ նույնպես անգլերեն և ռուսերեն լեզուներով, ինչպես նաև 1985թ. Մոսկվայում հրատարակված արտասահմանյան գրականության մատենագիտությունը: Հարկ է եղածների մեջ առանձնացնել ակադ. Մ.Ներսիսյանի խմբագրությամբ Մեծ եղեռնի 80-ամյակին նվիրված 896 անուն ընդգրկող մատենագիտությունը:

Գրախոսվող մատենագիտությունը ոչ միայն նպատակ ունի մասնագետներին օգնելու, այլև որոշակի քայլ է ապագայում ավելի ամբողջական մատենագիտություն կազմելու ուղղությամբ: Գրքում ամեն մի Հեղինակի աշխատության կողքին տրվում են դրա Համառոտ անոտացիան, գրախոսականները, նաև՝ մատենախոսությունների սեղմագրերը: Առանձին Հեղինակների գործեր ուղեկցվում են մանրամասն տեղեկություններով ու բացատրություններով:

Հասկանալի պատճառով Հեղինակներին չի հաջողվել հավաքել, ի մի բերել գոյություն ունեցող բոլոր նյութերը: Աշխատությունում բացակայում են առանձին հրապարակախոսական, Հուլազարական նոթեր, գիտական արժեքավոր հետազոտություններ: Դա բացատրվում է նրանով, որ շատ նյութեր (պարբերական մամուլի և գիտական), որոնք վերաբերում են ինչպես մինչև 1917թ., այնպես էլ 1917թ. մինչև մեր օրերը՝ ընկած ժամանակներին, չեն պահպանվել Հանրապետության գրադարաններում: Աշխատության մեջ տեղ են գտել նաև ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են Թուրքիայի ազգային փառաքականության ու գաղափարախոսության Հարցերին, Արցախյան շարժման Հիմնախնդիրներին: Հեղինակները կազմել են նաև ազդեցիկամետ և հակաազդեցիկամետ աշխատությունների զգալի մասի մատենագիտությունը:

Մեծածավալ մատենագիտությունը բաժանված է երկու մասի. առաջին բաժնում ներկայացված են 523 գրքեր, իսկ երկրորդ բաժնում՝ 1837 ամսագրային Հոդվածներ: Վերջում տրված են Հեղինակների, խմբագիրների, թարգմանիչների, գրախոսների և աշխատանքների այբբենական ցանկեր: Կարելի է արձանագրել, որ ընթերցողի սեղանին է դրված, Հիրավի, պատմագիտական և արդիական մեծարժեք մի մատենագիտություն, որը թարմ շնչառություն կհաղորդի պատմական ու Հասարակագիտական զարգացմանը:

Է.Գ.ՄՆԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու